

3644

1296

891.71

8-91

1305

891.75-34
2-90

XVII 2

Վ. Ա. Ժ Ո Ւ Կ Ո Վ Ս Կ Ր

ԵՐԵՐ ԳՕՏԻ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԷԳԵԱԹ

ԹԱՐԳՄԱՆՅՈՒՆՆԵՐ
Մ. Վ. ՄԱՔՍՈՒԳԵԱՆՅ

ԳԱՎՐԵԹ

1905

Թ Ե Մ Ա Կ Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

Յիսաակ վաղամեռիկ Եղիսաբեթի Մլրդարեգեանց

2003

Ամբ. Զեյնի Արքեպիսկոպոս Զեյնի
 Գրադարանի Արքեպիսկոպոս Զեյնի
 Գ. Ա. ԺՈՒԿՈՎՍԿԻ Զեյնի. Մեջ բացի.

89171-
 2-91 պ. 49


ԵՐԵՐ ԳՕՏԻ

1001
 4114

ՌՈՒՍՍԿԱՅ. ԶԷՆՈՍԻ

ԹԱՐԳԱՆՆՑ ՌՈՒՍԵՐԼՆՈՅ

Մ. Վ. ՄԱՐՍՈՒԴԵՆՑ



ԴԱՎՐԵԺ

1905

ԹԵՄԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Ֆիզսակ վարամեհիկ Եղիսաբեթի Միգաբեգեանց

ԵՐԵՔ ԴՕՏԻ

(Ռուսական հեփար)

Վլադիմիր Մեծ իշխանի թագաւորութեան
 օրով, Քիէվի մօտերը, արագահոռ Գնեպրի ափին,
 մի առանձնացած հիւղակում ապրում էին երեք
 դեռահաս աղջիկներ, երեքն էլ որք և միմեանց
 հետ շատ սիրով. մէկի անունն էր Պէրէսէտա,
 միւսինը Միրոսլաւա, իսկ երրորդինը՝ Լիւդմիլա:
 Պէրէսէտան ու Միրոսլաւան գեղեցիկ էին մա-
 յիսեան յոյսի պէս. հարեաններն անւանւում էին
 նրանց ալ վարդ, այդ պատճառով էլ նրանք փոքր
 ինչ ինքնասէր էին դառել: Լիւդմիլան գեղեցիկ
 չէր, ոչ ոք չէր գովում նրան, իսկ իր ընկերուհի-
 ները, որոնց սիրում էր ամբողջ սրտով, ամէն
 Ասածու օր ասում էին նրան. — Լիւդմիլա, խեղճ
 Լիւդմիլա, երբեք չես կարգւելու. քեզ ո՛վ կը սիրէ.
 ո՛չ գեղեցիկ ես ո՛չ հարուստ: — Բարի Լիւդմիլան
 միամիտ սրտովն հաւատում էր միշտ և չէր վըշ-
 տանում: — Ճշմարիտ են ասում. ես ո՛վ, կարգւո՛ղն
 ով. ինչի՞ս է պէտք: Բաւական է որ աշխարհիս

վրա սիրեմ Պէրէսէտայիս ու Միրոսլաւայիս ամէն
բանից աւելի և սիրւիմ նրանցից. էլ ի՞նչ աւելի
մեծ բախտ, որին ցանկանամ ես: Այսպէս էր մը-
տածումս պարզասիրտ Լիւդմիլան, և նրա մաքուր
հոգին հանգիստ էր: Նա տասն և հինգ տարու
էր, բայց դեռ ոչ մի պղտոր ցանկութիւն չէր
խուզել նրա անմեղ սիրտը. սիրել իր ընկերուհիներ-
ընն, զնալ ծաղկի, երգ երգել, որպէս մի քնքշ
շիկահաւ, — ահա բարի Լիւդմիլայի բոլոր հաճոյք-
ները:

Մի օր երեք ընկերուհիները միասին զբոս-
նում էին առւի ափին՝ փիճիկների ու ցարասիներ
ի հովանու տակ: Պէրէսէտան ու Միրոսլաւան
բնիկներ էին քաղում իրանց գլուխները զարդա-
ծաղիկներ էին քաղում, միայն թէ Պէ-
րիւս. Լիւդմիլան էլ էր քաղում, միայն թէ Պէ-
րէսէտայի ու Միրոսլաւայի համար: Նա երեւա-
կայում էր, որ իրան վայել չէ զարդարանք ասած
բանը մօիցն անգամ անցկացնել: Յանկարծ առւի
ափին տեսնում են մի պառու, որ քնած էր խոր
քնով. արևի ճառագայթներն ընկել էին ուղղակի
նրա այնհեր և գրեթէ հերթած գլխի վրա: Պէ-
րէսէտան ու Միրոսլաւան ծիծաղեցան: — Քոյրիկ,
ասաց սրանցից մին, ի՞նչպէս է թւում քեզ այս
գեղեցկուհին: — Քեզնից լաւ, Միրոսլաւա: — Քեզ-
նից էլ, Պէրէսէտա: — Քիչ է քնում քրքուռն այն-
քան գեղնութիւն չունենա ինչքան սրա պատերը:

Ծածկւած սիրուն սիրուն խորշոմներով: — Հապա
քի՛թը, Պէրէսէտա, ճիշտն ասա, կարծես ողջոյն
է տալիս ծնօտին, չէ: — Ճիշտ եմ ասում, պղպի-
սի գեղեցիկ քթին այդպիսի շնորհալի ծնօտ: —
Իրար լաւ են դատի, քոյրիկ: — Այսպէս թէ մին
թէ միւսն է՝ ասում և՛ ծիծաղում էին: — Ախ,
քոյրիկներ, ասաց խաղաղասէր Լիւդմիլան, վայել
չէ ձեզ ծիծաղել այս պառուի վրա: Ի՞նչ տեսաք
սրանից: Պառու է, մի՞թէ զրա համար պէտք է
մեղադրել սրան: Մի օր էլ գուր էր պառուելու.
էլ ինչո՞ւ ուրեմն ծիծաղիք մի այնպիսի պա-
կասութեան վրա, որը անպատճառ ունենայու
էր և գուր: Ծիծաղել ծերերի վրա, նոյնն է թէ
ժամանակից առաջ ծիծաղիք մեզ վրա: Խոհեմ
եղէք, աւելի ճիշտն ասեմ, զթոռ եղէք: Նայեցէք,
տեսէք, ի՞նչպէս արևն այրում է խեղճ կնոջ
գլուխը: Արի՛ք ոստեր կտրենք ցարասու, մի
փոքրիկ տաղաւար հիւսենք շուրջը, որպէս զի
քունը տանի և՛ հանգիստ և՛ ապահով: Զօրթո-
նելուց յետո օրհնէ թող մեզ և աղօթող լինի մեզ
համար. երկինքը խում է միշտ ծերերի ու աղ-
քասների աղօթքը, ասում էր հոգեւոր մայրիկս: —
Պէրէսէտան ու Միրոսլաւան զգացին իրանց յան-
ցանքը, Լիւդմիլայի հետ միասին կտրեցին ցարա-
սու ոստեր, տաղաւար հիւսեցին և պաշտպանեցին
պառուի գլուխն արևի ճառագայթներից: Ընտրով

գարթնեց նա. տեսաւ իր վրա շւաք, զարմացաւ, սկսաւ չորս կողմը նայել. իր առաջ կանգնած էին Պէրէսէտան, Միրոսլաւան և Լիւզմիրան: Ընորհակալ եմ ձեզնից, անձանօթ բարեկամներս, ասաց նրանց. մօտ եկէք ինձ. ուզում եմ թողնել ձեզ շնորհակալութեանս յիշատակը: Լհա երեք գօտի. ձեզնից ամէն մէկը կարող է ընտրել իր համար ո՛րը որ աւելի լաւ և աւելի արժէքաւոր համարի: Պառաւր խոտի վրա դարսեց երեք գօտի. երկուսը չափազանց ճոխ էին, ընդելուզւած մեծ մեծ մարգարիտներով և ադամանդներով. երրորդը մի պարզ, անսովոր սպիտակ գոյնի ժապաւէն էր՝ զարդարւած մանուշակներով: Պէրէսէտան ու Միրոսլաւան յարձակեցան մարդարարի ու ադամանդի վրա. Լիւզմիրային մնաց սպիտակ ժապաւէնը: Ընորհակալ եմ քեզնից, ասաց պառաւին, այս հասարակ զարդն ինձ համար աւելի լաւ է: Պէրէսէտան ու Միրոսլաւան գեղեցիկ են զէմքով. պէտք է որ իրանց զգեստներն էլ գեղեցիկ լինին. իսկ ինձ համար հասարակ և համեստ շորն էլ մեծ բան է: Ճիշտ ես ասում, սիրելիս, ասաց պառաւը Լիւզմիրային, կապելով գօտին նրա մէջքը. երբէք կեանքիդ մէջ չհանես քեզնից և ո՛չ մի դանձի հետ չփոխես այս ժապաւէնը. երբէք չհաւատաս այն մարդկանց, որք քեզ պիտ' ասեն, թէ այս գօտուց քեզ օգուտ չկա. պզոյշ եղեր հպարտութեան հրա-

պուրանքից. լաւ իմացիր, որ եթէ կորցնես այս գօտին, պիտի կորցնես և այն բախտը, որ անբաժան է սրանից:—Լիւզմիրան համբուրեց պառաւի ձեռք և խոստացաւ ոչ ոքի չտալ նրանից ստացած այդ ընծան: Պառաւն անյայտացաւ: Պէրէսէտան և Միրոսլաւան չկարողացան ականջ դնել նրա խօսքերին. նրանք յափշտակւած նայում էին միայն իրանց մարդարիտներին ու ադամանդներին, և հազիւ կարողացան յայտնել նրան իրանց շնորհակալութիւնը:

Թեւ թեի մտած Պէրէսէտան ու Միրոսլաւան շտապեցին հիւղակ: Լիւզմիրան տեսնելով, որ նրանք իրանց մէջ մի զաղտնիք ունին, հեռից էր դնում նրանց ետեւից:—Ճշմարի՞տ է, որ—հարցրեց վերջապէս Միրոսլաւան հտ դառնալով դէպի Լիւզմիրան—այս ծիծաղելի պառաւը քեզ չափազանց հարուստ ընծա տւաւ:—Ոչ հարուստ, բայց ինձ համար շատ հաճելի ընծա. ճոխութիւն չեմ սիրում ես:—Ինչո՞ւ ուրեմն քեզ համեմատեց մեզ հետ:—Այդ մասին ես չեմ էլ մտածեր: Այն ինչ որ ինձ տալիս են, ինձ համար աւելի հաճելի է քան այն, ինչ որ ինձ զրնում են:—Տե՛ս, ի՛նչպէս են փայլում մեր ադամանդները:—Տեսէ՛ք, ի՛նչպէս սպիտակ է իմ ժապաւէնը:—Չե՛ս նախանձում մեզ:—Պարելի՞ է սիրած մարդուն նախանձել: Ուրախ եմ, որ դուք

երջանիկ էք:—Դու բարի աղջիկ ես, Լիւզմիյա, կաց տանը. մենք գնանք Քիէվ նոր շորեր գնելու. մեր ունեցածները չափազանց վատ են այսպիսի դօախների համար, դարդարւած այսպէս ազամանդներով ու մարգարիտներով: Մի մարգարտով կարող ենք ամենից ճոխ գգեսացի տասը ձեռք գնել: —Պէրէսէտան ու Միրոսլաւան գնացին Քիէվ. Լիւզմիյան մնաց տանը՝ ծաղիկներ ոռոգելու և իր թռչնիկներին կեր տալու:

Երեկոյին Միրոսլաւան ու Պէրէսէտան վերադարձան հիւղակ հետները բերելով մի մեծ ծրար ծանրադին շորեր:—Մի լաւ աւետիք տա՛մ քեզ, քոյրիկ, ասաց Պէրէսէտան Լիւզմիյային, երիտասարդ Սվեատոսլաւ իշխանը, Վլադիմիրի որդին, գեղեցիկ ինչպէս լոյսը զարնան և քաջ ինչպէս զիւցադնն Դորբրնեա, ուզում է իր համար հարսնացու ընտրել: Բազմաթիւ գեղեցկուհիներ, բոյարների դուստրեր, նոյնիսկ հասարակ գեղջկուհիներ հաւաքւում են Քիէվ Ռուսաստանի հեռաւոր քաղաքներից, գիւղերից ու հիւղակներից: Ո՞վ է արգելողը, որ մենք էլ հետամուտ լինինք գեղեցիկ Սվեատոսլաւ իշխանի ձեռքին: Ասուած աւել է մեզ գեղեցկութիւն, իսկ բարի պառաւը վարձատրեց մեզ հարուստ ընծաներով: Միրոսլաւան ու ես ուզում ենք Քիէվ աեղափոխւել. մեզնից ամէն մին, իր թանկագին դօտու շնորհիւ,

կարող է պատուով ու գերազանց շուքով հանդէս գալ մարդկանց մէջ: Որոշել ենք և վաղը մեկնելու ենք Քիէվ: Իսկ դու, ագնի՛ւ Լիւզմիյա, կարող ես գալ մեր ետեւից. դու կընայիս առանին գործերին և դրա հետ միասին կըտեսնես նաև ընտրութեան արարողութիւնը, որ վերին աստիճանի շքեղ է անցնելու: — Աչքիս վրա, սիրելի քոյրիկներ, պատասխանեց Լիւզմիյան ուրախ ժպտով. կը ծառայեմ ձեզ բոլոր սրտով. ձեր խնդութիւնն ինձ համար երջանկութիւն է: Ջանացէք գերել գեղանի իշխանին, իսկ ես կ'ազօթեմ Ասածուն, որ նրա սիրտն հակէ գէպի ձեզ:

Ինչ որ ասացին, այն էլ արին: Միւս օրն առաւօտ վաղ երեք ընկերուհի ուղևորեցան Քիէվ: Միրոսլաւան ու Պէրէսէտան իրանց դուստր յայտարարեցին Նովոգորոդցի հարուստ իշխանների: Վլադիմիրի բոյարներից մին արձանագրեց նրանց անուններն այն օրիորդների շարքում, որք փափաքում էին ներկայանալ Սվեատոսլաւ իշխանի ընտրութեան: Լիւզմիյան ոչ ոքի չերեաց. նա ազօթում էր Ասածուն իր ընկերուհիների երջանկութեան համար, շորեր էր կարում, մարդարտից վզնոցներ պատրաստում, ոսկիներով ու ազամանդներով արիզում նրանց շորերը. ինքն իրան մոռացած՝ ապրում էր միայն իր սիրելի ընկերուհիների համար:

Վերջապէս եկաւ ընտրութեան հանդիսաւոր օրը: Երեկոյն Վլադիմիր Մեծ իշխանի ապարանքը լրսաւ լուսեղան հազարաւոր ջահերով. հանդէսին յատկացրած պալատը զարդարած էր բոսորագոյն թաւիշով. աթոռները, որոնց վրա պէտք է նստէին թէ օտար քաջաքացի և թէ բնիկ Քրիէվցի գեղեցկուհիները, ծածկւած էին մետաքսեա գորգերով՝ ծոպերը ոսկի. իսկ Վլադիմիր Մեծ իշխանի և Սվետաոսլաւ իշխանի համար պատրաստեցին մի բարձրաւանդակ, որի վրա կար մի զոյգ փղոսկրեա թիկնաթոռ սոկի քանդակներով: Դէպի իշխանի ապարանքը տանող փողոցում խռնւել էր ահագին ամբոխ և վառուում էին գոյնզգոյն լոյսեր: Վերջապէս հնչեցրին թմբուկները. մի յափշտակիչ տեսարան էր որ պարզեցաւ. հարիւր գեղեցկուհի՝ գարնան նորափթիթ վարդերի նման՝ Քրիէվցիների ոգևորւած ամբոխի միջից՝ զոյգ զոյգ գնում էին Մեծ իշխանի ապարանքը. նրանցից ամէն մէկն ունէր իր հետ մի աղախին. Լիւդմիլյան ուղեկցում էր Պէրէսլէտային ու Միրոսլաւային: Լիւդմիլյան հագել էր սպիտակ զգեստ և գօտեւորած էր իր գօտով. նրա խարտեաշ մազերն հիւսակ հիւսակ՝ հանգրիծւած էին պարզ ժապուէնով. նա մօտեցաւ Վլադիմիրի պալատին սրտի ուժգին բաբախումով, նստաւ իր ընկերուհիների հետ, և մի խորհրդաւոր, երկչոտ նախազգացու-

մով նայում էր այն դրան, որից պէտք է ներս մտնէին Վլադիմիր Մեծ իշխանն ու նրա որդին գեղեցիկն Սվետաոսլաւ: Երկար ժամանակ տիրում էր խոր լուսթիւն իշխանական պալատում: Յանկարծ ածել սկսան զինւորական նւագածուները. դռները բացեցան մեծ խժորով. զոյգ զոյգ ներս են մտնում բոյարներն ու զիւցազները, ոմանք զիպակէ շքեղ շորերով, ոմանք էլ սպառազինւած զինւորական արդուզարդերով, կրծքներին ոսկեա յանձապանակ և զլուխներին սաղաւարտ՝ պննւած սպիտակ փետուրներով: Բաժանւում և կանգնում են իշխանական զահի երկու կողմերում: Պատերազմական փողերը լուռ են. սկսում են ածել մեղմաձայն սրինգներ. բոլորի աչքն յառած է բաց դռներին. յանկարծ ներս է մտնում Վլադիմիր իշխանը՝ հագած իշխանական ծանրադին շորեր. նա ձեռից բռնած բերում է իր հետ երիտասարդ Սվետաոսլաւին. պարզ է սրա հագուստը, զլուխը բաց, լոյսի պէս խարտեաշ մազերը՝ զանգուր դանգուր՝ ցանուցիր իջած ուսերի վրա, իսկ ինքն ընտիր և նորափթիթ մի երիտասարդ. կարմիր՝ գարնան վարդի պէս թարմ՝ խաղում էր այտերի վրա. նրա խոշոր, թուխ և թանձր արեւանունքներով հովանաւորւած աչերում փայլում էր մի քնքոյշ բոց. հասակը դիւրաթեք էր և բարեկազմ, քայլածքը խրոխտ և իր բոլոր շարժ

ու ձևերն հաճելի: Ախ, Լիւզմիլա, խեղճ Լիւզմիլա, ի՞նչ եղաւ քո սիրտն, երբ հայեացքդ ընկաւ այդ սիրուն պատանու վրա:— Ինչո՞ւ ես գեղեցիկ չեմ, ինչո՞ւ ես հարուստ չեմ, — մտածեց նա, հառաչեց և աչերը կախ ձգեց իր կրծքի վրա, որ առաջւանից աւելի ուժեղ խռոված էր, բայց էլի շուտով, հակառակ իր կամքին, յառեց այդ աչերն այն վեհաշուք իշխանի վրա, որ այն ընդարձակ պալատում ինքնին կարծես մի հրեշտակ լինէր մարդու կերպարանքով, այնքան որ պատկառանք էր ազդում: Նրա ամբողջ հոգին սկսաւ յուզել... աչերն հանդիպեցան գեղեցիկ Սվետաոսյաւի աչերին: Ո՛հ, Աստուծո՛ւ իմ, զալիս է մօտը... Միրոսյաւան ու Պէրէսէտան օտի են կանգնում, կարծելով թէ ընտրւողն իրանցից մէկն է լինելու...: Սվետաոսյաւն իր ձեռը տալիս է Լիւզմիլային: «Ահա, ասում է, սա է, սա է այն էակը, որին տեսնում էի հոգով և՛ արթնութեան ժամանակ և՛ երազներիս ու անուրջներիս աշխարհում: Սրան եմ տալիս և՛ ձեռս և՛ սիրտս»: Լիւզմիլան քիչ էր մնում կորցնէր իրան. չէր հաւատում իր ականջներին, դողդողում էր, գոյնը նետում, կարմրում: Սվետաոսյաւն իր անխօս հարսնացունին առնում տանում է Վլադիմիր Մեծ իշխանի մօտ, ապա բազմեցնում իր կողքին փղոսկրեա և ոսկեքանդակ թիկնաթոռի վրա: Պալատում լսելի եղաւ տրտունջի ձայնը:

«Այս ի՞նչ ընտրութիւն է» փսփսում էին վիրաւորւած գեղեցկուհիները, նայելով համեստ Լիւզմիլային, որ պարզ էր հաղնւած և բնաւ ո՛րեւէ փայլ չունէր գեղեցկութեան: Պէրէսէտան ու Միրոսյաւան վշտից ու նախանձից գլուխները կորցրին: Ո՞ւր մտից կ'անցնէր, ասում էր մէկը միւսին, որ Լիւզմիլային նախամեծար համարէին մեղնից. ո՛րպիսի կուրութիւն: Տղամարդիկ նոյնպէս նայում էին Լիւզմիլային, բայց սրանց զգացածը բոլորովին այլ էր քան նրանցը: Ի՞նչ հրաշալի տեսք ունի, բացադանչում էին թէ՛ ծերերը թէ՛ երիտասարդները, ի՞նչ զրաւիչ համեստութիւն, ի՞նչ անմեղ նայւածք, ի՞նչ քնքոյշ, ի՞նչ քաղցր հոգի է նկարւած իր գուրեկան դէմքին, քաղցրաբոյր մանուշակի նման: Լիւզմիլան ինքն էլ չէր ըմբռնում այն քնքոյշ զգացումը, որով լցւած էր իր սիրտը. չէր համարձակում նայել գեղեցիկ Սվետաոսյաւ իշխանին, և իր անոյշ անոյշ յուզելով աւելի ևս զարգարում էր իրան: Սվետաոսյաւը սեղմեց նրա ձեռն ու սիրտ տւաւ նրան իր վառփռուն նայւածքով:

Վերջապէս խօսք առաւ Վլադիմիր Մեծ իշխանն և բոլորը լռեցին:— Որդեակ իմ, ասաց գեղեցիկ Սվետաոսյաւին, քո ընտրութիւնն հաճո թւեցաւ իմ ծնողական սրտին. բայց լծակցի արժանիքը միայն գեղեցկութիւնը չէ. ես կամենում եմ,

որ նա գեղեցկութեան հետ ունենա և ուրիշ յատկութիւններ ու ձիրքեր, որոնք աւելի յուսալի լինին։ Այս ընտրած հարսնացուդ իր դէմքի հրապոյրներով գերազանցում է բոլոր միւսներին, բայց տեսնե՞ք արդեօք այդ հրապոյրների. հետ խեղճ ու ձիրք էլ ունի։—Լիւզմիլայի գոյնը նետեց, երբ յետք Վլադիմիր Մեծ իշխանի խօսքերը։ «Ա՛խ, բաղադանչեց, ես ոչինչ չեմ սովորել։ Այս բուպէական հանդէսը նրա համար է, որ ցոյց տա իմ տգիտութիւնն ամբողջ աշխարհին։ Բաց թող ինձ գնամ, Մեծ իշխանդ Վլադիմիր, ես այստեղ եկա ո՛չ թէ խելու ուրիշ աւելի արժանաւորներից այն երջանկութիւնը, որի համար ինձ աշխարհ չի բերել բախտը, այլ գլարձանալու իմ սիրելի ընկերուհիների երջանկութիւնը տեսնելով։ Բայց թող ինձ գնամ. ինձ վիճակւածն է պատասպարել մի խեղճ հիւղակում, գնալ ծաղկի, դոհ լինել իմ հէք վիճակից, և երբէք չերազել այսպիսի փառապանծ դահ»։ Վլադիմիր իշխանը քաղցր ժպտով նայեցաւ համեստ Լիւզմիլային և հրամայեց, որ միայն իր տեղում։ Բերին քաղցրալուր տաւիղը։ Բոլոր գեղեցկուհիներն հերթով մի մի երգ երգեցին փառաբանելով քաջամարտ զիւցազներին կամ ներքողելով քնքոյշ սէրը. իւրաքանչիւրն հանդէս էր բերում այն զգացումը, որ յանկուցանում էր նրա հոգին դէպի Սվետաոսլաւ գեղեցիկ իշխանը։ Հերթն

հասաւ Լիւզմիլային. սա գունատում, դողդողում է. յանկարծ մի անտես էակ փսփսում է ականջն ի վար. Սիրտ առ, Լիւզմիլա, իմ պահապան աչերն հսկում են քեզ վրա։ Երգիր այն երգը, որ քեզ սովորեցրել է բո մայրը, դու գեռ չգիտես, թէ ի՞նչ ձիրքեր է տւել քեզ բնութիւնը։—Լիւզմիլան ճանաչում է բարեբար վհուկի ձայնը, ձայնն այն պառաւի, որ մի գօտի էր ընծայել իրան։ Մօտենում է տաւղին. նստում է որ ածէ, ո՛հ, հրա՛շք, մատները թիթե գեփիւտի պէս թռչում անցնում են լարերի վրայից. ձայնն հնչում է սոխակի ձայնի նման յստակ և ուժգին։ Այդ ձայնն հոսում անցնում է հոգու մէջ. զարթեցնում է այնքան քաղցր գմայլանք, սուզում է խոկմունքի մէջ, հետզհետէ բաց է անում նրա մէջ ցնորքի աղբիւրներ։ Լիւզմիլան երգում է այն երգը, որ երգում էր մի ժամանակ իր քնքոյշ մայրը երբ օրօրոցում օրօրում էր նրան։—

«Քննոյս վարդիկ,
Դարձան ծաղկիկ,
Թաք կացիր.
Վառ առեկից,
Ճանաչնեցից
Սարսափիւր:
Ահա պուրակ,
Ահա ռաք

Քեզ համար».
Փսփսում եր
Վարդին քիթուն
Անդապար:
Վարդը սակայն
Արեգական
Շողերից

Հրապուրեամ՝
Թիքրան ասաց.
«Արեւն ինձ,
Ինձ, գեղեցիկս,
Աննամանիս,
Սիրում ե.
Մսնել պուրակ,
Դսնել շաւ
Ի գուր ե»:

Հպարտութիւն,
Անմտութիւն.
Տե՛ս, ի՛նչպէս
Իր մահաբեր
Ճառագայթներն
Հրակեզ
Սփռեց արփին
Վարդի գլխին
Եւ նրա
Խլեց բոյրը,
Խլեց բոյրը
Անխնայ:
Սիրուն աղջիկ,

Քննոյ՛ ծաղկիկ,
Այս անմիտ,
Այս սնապարծ
Վարդին արկած
Պահիր միտ.
Ծաղկիր համես
Որպէս պարկեօս
Մանուշակ.
Բուրիւ հանգուս,
Լուռ, անարատ,
Անուշակ:

Եւ եւ բախտից,
Անուշ բախտից,
Գոն եղիր.
Փառք ու պատիւ,
Գանձեր անքիւ.
Մի՛ պտիր.
Մութ պուրակում
Է կարկաչում
Անխնայ՝
Առուն վնիս
Մրրկից խիստ
Ապաքնով:

Լիւզմիլան լռեց. բայց նրա ձայնն հնչում էր
գեռ ունկնդիրների սրտերում: Երիտասարդ իշխանն
աննկարագրելի զմայլանքով սեղմում է նրան
իր սրտին. «՛հ, անկարելի է որ դու մահկանացու.

եղած լինիս. դու մի հրեշտակ ես, որ իջել ես երկ-
նուց Սվեատոսլաւիս երջանկացնելու»: — Ա՛խ, ես
խեղճ՝ Լիւզմիլան եմ. ես ինքս էլ չեմ հասկանում
թէ ի՛նչ եմ լինում. պատրանքը կուրացրել է ձեր
աչերը: Դուք կարծում էք թէ ես գեղեցիկ եմ.
սխալում էք. երբեք չեմ եղել գեղեցիկ: Սվեատո-
սլաւ, դու ուզում ես ինձ դա՛հ բարձրացնել, բայց
ես ի ծնէ գեղջուկ եմ և աշխարհ եմ եկած խեղճ
ու աննշան հիւզակում ապրելու: —

Կրկին հնչեցին նւագարաններն և սկսաւ
պարը: Լիւզմիլայի մրցակիցներն իրանց դուրե-
կան, թեթեւ և արագ արագ շարժուձևերով
զմայրեցրին հանդիսականներին. բայց Լիւզմիլան
էլի խրախուսւած վհուկի ձայնից՝ նսեմացրեց ար-
ւեստն իր պարզութեան հրապոյրով, նրա բոլոր
շարժումների մեջ կարծես մի զիւթիչ բան կար
— համեստութեան հեռ և մի քաղցր խնդու-
թիւն: Նրա աչերում փայլում էր անմեղութիւնն
հաճոյքի հեռ միասին. հանդիսականներն իրանց
փափաքը չառին նրան նայելուց. սրտերը թռչում
էին նրա ետեւից.... լռեցին սակայն նւագարաննե-
րը... Լիւզմիլան, աչերը կախ, այտերը կրակի պէս
շառագունած, նստաւ իր տեղը, չհամարձակելով
ոչ ուրախանալ, ոչ էլ մի հայեացք ձգել գեղեցիկ
Սվեատոսլաւի վրա:

Կէս զիշերը վազուց էր անցել: Մեծ իշխանը



Սվեատոսլաւի ձեռից բռնած՝ բոյարների ու մեծատունների հետ դուրս է գալիս պալատից. դեղեցկուհիներն հեռացան, բայց քննութիւնը դեռ չէր վերջացել, ամբողջ երեք օր շարունակելու էր: Լիւդմիլային տարան տիկնանց սենեակը՝ շքեղ և զարդարուն. նրան սպասաւորելու համար կարգեցին բազմաթիւ աղախիներ: Նա մնաց մենակ, համակած մտախոհութեամբ, մինչեւ այդ ժամանակ անձանօթ նոր զգացումներով և կրելով իր հոգու խորքում Սվեատոսլաւի զմայելի պատկերը:

Իսկ մենք թողնելով առ ժամանակ Լիւդմիլային՝ յիշենք նրա երկու ընկերուհիներին՝ Պէրէսէտային ու Միրոսլաւային:—Նրեակայելու բան էր, ասաց Միրոսլաւան Պէրէսէտային՝ նրա հետ տուն վերադառնալուց յետո, Լիւդմիլային գերադասելով մեզ: Անտարակոյս, կոյր են դրանք. այսպէս բան չէր լինել: Ի՞նչ ես ասում, Պէրէսէտա, չլինի՞ մի հուսով եր այն դօտին, որ նրան տաւ պառաւ կախարդը: Մեզ նկատմամբ այնքան առատաձեռն լինելով կարճ էր մոռանալ Լիւդմիլային: Անշուշտ, նրա հասարակ դօտին աւելի թանկ արժէքան մերինները, մարդարայեւ և աղամանդակու: Տեսա՞ր ի՞նչպէս էր փայլում երէկ երեկո այդ հասարակ դօտին նրա մէջքին:—Չառ ճիշտ ես ասում, Միրոսլաւ. Լիւդմիլան ունի մի հուսով, որի արժէքը սակայն ինքը չգիտէ, արի՛ խլենք նրանից այդ հուսովը,

տեսնենք էլ ի՞նչ ձիրք, ի՞նչ փայլ կ'ունենա, որ նսեմացնէ մեզ:

Միւս օրն, առաւօտ վաղ, Պէրէսէտան ու Միրոսլաւան գնում են Լիւդմիլայի սենեակը. նա տեղից թոչում, ողջագուրում է նրանց, համբուրում է ջերմագին և կարմրում, երբ լսում է նրանց կեղծ շնորհաւորանքները:—Մի՛րելի ընկերուհիներս, ասում է նրանց համեստ Լիւդմիլան, ես ինքս էլ եմ ամաչում այն պատիւներից, որ այնքան առատ շուայլեցին ինձ երէկ. չեմ հասկանում ի՞նչպէս կարելի էր ինձ նման ողորմելի, աղեղ մէկին նախապատիւ համարել ձեզնից, որ գեղեցիկ էլ էք, հարուստ էլ էք և արժանի ամէն նախապատուութեան:—Ազնի՛ւ Լիւդմիլա, պատասխանեց Միրոսլաւան, ինչ որ քեզ համար տարօրինակ է, մեզ թւում է բոլորովին բնական. մենք չենք նախանձում, այլ ուրախ ենք սրտանց, որ բախար ժպտեցաւ քեզ. ժամանակ է, որ բաց անես աչերդ. հերի՛ք ինչքան քեզ աղեղի տեղ զրբիր: Ասուած պարզեւ է քեզ մի հրաշագեղ դէմք. մենք քեզ սիրելուց էր, որ աղեղ անունն էինք տալիս քեզ. գովեստները կարող էին ապականել քո անմեղ սիրտը: Այժմ սակայն կեղծելն աւելորդ է, և դու, սիրելի Լիւդմիլա, խմացած եղիր, որ ոչ մի կին չունի քո գեղն ու հրապոյրը, քո շնորհն ու ձիրքը:—Չլինի՞ ձեռ էք առել ինձ, քոյրիկներ:

—Ա՛խ, Լիւզմիլա, ի՞նչպէս էլ կտրողանում ես այդպիսի բաներ մտածել մեր մասին: Մենք ինչ որ ճշմարիտ է, այն ենք ասում: Միայն թող տուր, ընկերաբար մի նկատողութիւն անենք քեզ աչքի ընկնող երկու թերութիւն ունիս, որ արդելք են լինում քեզ վայելելու բնութեան պարգևները—չափազանց ամաչկոտութիւնդ ու չափազանց անհոգութիւնդ արդուղարդիդ նկատմամբ: Այսօր երեկոյին մէկ էլ պիտի ներկայացնենք Վլադիմիր Մեծ իշխանին ու իր որդուն Սվետաոսլաւ գեղեցկին. ասում են. Քիէվ է ժամանել մի հրեշտակազեղ աղջիկ, որ չափազանց էլ ընտիր ճաշակ ունի հագնւածքի. զոյ՞շ, որ չիլէ քեզինք գեղեցիկ Սվետաոսլաւի սերը. որքան կարող ես լաւ դարձարւիր: Այդպիսի գեղեցկուկան շքեղ էլ հաղուստ է պէտք: Մենք մի քանի ձեռք զգեստ բերել ենք մեզ հետ, նայիր, տես և որին որ հաւանիս, այն էլ հագիր, իսկ մենք խնդաղին կ'ողջունենք քո յաղթանակը:

Միրոսլաւան ու Պերէսէտան Լիւզմիլայի աչքի առաջ բաց արին մի քանի ձեռք ընտիր, շքեղ զգեստ: Անմեղ աղջկա հոգում ծնունդ առաւ նոր գեղեցկութիւն. երեւակայում էր իրան առաջին գեղեցկուհին համայն Ռուսաստանում և կարմրում էր՝ տեսնելով իր անշուք զգեստը: Փորձեց մի առ մի բերւած բոլոր շորերը. վերջրեց ամենից շքեղը,

ուղեց ծանրագին զօտին կապել այն սպիտակ ժապաւէնի վրայից, որ նւեր էր ստացել պառաւից, բայց, աւա՛ղ, զօտին շատ փոքր էր: Պերէսէտան ու Միրոսլաւան յորդորում են նրան մի անպէտ ժապաւէնի համար չղրկել շքեղ, մարգարտայեռ զօտուց: Լիւզմիլան տատանում է: Վերջապէս գիջանելով նրանց պահանջին՝ անպէտ ժապաւէնը տալիս է Պերէսէտային ու մարգարտայեռ զօտին անց է կացնում մէջքը: Հա՛, տեսա՛ր հիմա, ի՞նչ բարեկազմ, ի՞նչ գեղեցիկ հասակ ունիս—բացառանչում են ընկերուհիները: Նորեկ ախոյեանին ուրիշ բան չի մնում բայց եթէ մեր Լիւզմիլայի հանգէսի շուքն աւելացնել: Մնաս բարեաւ, սիրելի՛ ընկերուհի, երեկոյին նորից կը տեսակցինք Վլադիմիր իշխանի ապարանքում: Ասացին և բաժանւեցան նրանից: Լիւզմիլան յափշտակւած իր նոր զգեստից ու թանկագին արդուղարդից՝ բոլին մի անգամ նայում էր հայելուն, շարունակ կապում, հանում էր մարգարտայեռ զօտին, իսկ սպիտակ ժապաւէնը մոռացել էր բռնորովին: Ա՛խ, Լիւզմիլա, դ՞ու էլ ես մոռնում քո գեղեցկութեան մասին, սնափառ, մեծամիտ, հրապուրիչ աղջկանց նման, դ՞ու էլ ես նայում հայելուն, դ՞ու որ առաջ վճիտ առւին անգամ չէիր նայում եթէ ոչ նրա ջինջ, հեղատափ ախանդը զիտելու և այն խիճերը, որ ցանուցիր փայ-

լում են նրա յատակին:

Հասաւ վերջապէս ցանկալի լոպէն: Փեղեց-
կուհիները, բոյարներն ու հարուստները զիմում
են Վլադիմիր Մեծ իշխանի պայտոր: Սվեատո-
սլաւ զեղեցիկը սրտայայտ նայում է այն զրան,
որից ներս պիտի մտնէ Լիւդմիլան: Հնչում են
սրինգների քաղցրալուր ձայները: մտնում է Լիւդ-
միլան՝ սպիտակ շղարշն երեսին և շրջապատ-
ւած բազմաթիւ աղախիններով՝ բոյորն էլ շքեղ
զգեստաւորւած: Սվեատոսլաւը սլանում, դիմաւո-
րում է նրան, իր իսկ ձեռով անհամբեր հանում
է սպիտակ քողը նրա զիւրից... Ասում է իմ, ո՞ր-
պիսի փոփոխութիւն: Զի ճանաչում Լիւդմիլային:
— Այս ի՞նչ է, բացառանշում է Սվեատոսլաւը դարձա-
ցած: Ո՞վ ես դու, անծանօթ, և ո՞ւր է իմ Լիւդ-
միլան: — «Ես Լիւդմիլան եմ: մի՞թէ չճանաչեցիր
ինձ, զեղեցիկդ Սվեատոսլաւ:» — Պօ՛ւ, Լիւդմիլան,
անկարելի՛ բան է խաբէութիւն: — Տրտունջն ու
զգգոհութիւնը յսկի եղաւ իշխանական պայա-
տում: ո՛չ որ չի ճանաչում Լիւդմիլային: Սվեա-
տոսլաւն հեռացաւ նրանից, մթազնած աչերով ման
է դալիս գեղեցկուհիների բազմութեան մէջ
գտնելու այն սիրուն աղջկան, որ գերել էր իր
հոգին: յանկարծ Վլադիմիրը ձեռք բարձրացնում
է և կրկին լուրթիւն է տիրում: — Պու առում են
Լիւդմիլան ես եմ, չէ՞, ասում է Լիւդմիլային,

որ տխուր տրտում գողում էր լաւ, հաւատում
եմ որ զեղեցկութիւնդ կարող էր չքանալ մի
օրում, բայց անշուշտ ձիւրքերդ էլ չքացան: Տա-
ւիղը բերէք, նստիր ու երգիր մեզ այն երգը, որ
երգեցիր երէկ: Լիւդմիլան փոքր ինչ սիրտ առած՝
մօտենում է տաւղին — ո՞վ զարմանք, մատները
շին շարժում, ձայնը կոշտ է և անախտի: Վլա-
դիմիր իշխանը մեծ զայրոյթով գահեց վեր կե-
նում, հրամայում է Լիւդմիլային հեռանալ: Քննու-
թիւնը թողնում են միւս երեկոյեան:

Այս ի՞նչ բան է, զժբախտ, բարեփոխում Լիւդ-
միլա. դու լաց լինիս, չարչարիս յուսահատու-
թիւնից, տանջիս անյոյս սիրուց: Ո՞ւր է քո
այն անգորրութիւնը, ո՞ւր է քո այն անմեղ հո-
գու խաղաղութիւնը: Խեղճ որբուհին, արասունքն
աչերին, հեռանում է Քիէվից և քաշւում է իր
աղքատիկ հիւղակը, ջինջ աղբիւրի եզրին՝ սաղար-
թաղեղ ցարասիների հովանու տակ, ուր անց էր
կացրել իր մանկութիւնը: — Ինչո՞ւ, ինչո՞ւ հեռացա-
քեզնից, հիւղակդ իմ անգորրաւէտ, ասում էր
ինքն իրան իեղճ Լիւդմիլան պուրակի միջից՝
իրան ծանօթ ուրտապաղոյտ կածանից անցնելիս:
Մօտենում է հիւղակին և տեսնում է ներսում
վառ կրակ. սարսափում է, չի իմանում
ներս մտնէ՞ թէ ոչ, վերջապէս վճռում է ներս
մտնել. դուռը բաց է անում և ի՞նչ: Հիւղակում

նստած է պառսւ վհուկը, իր նախկին ծանօթը: Լիւզմիլան զարմանքից քար է կտրում, մի քանի վայրկեան ոչ մի բառ չի ասում, վերջապէս հաւաքում է ինքն իրան և յաղիս է աղի աղի արտասուէ թափելով:—Ախ, ասում է պառսւին, իմ դժբախտութեան միակ պատճառը դու ես: Ինչո՞ւ չժժբախտութեան միակ պատճառը դու ես: Ինչո՞ւ չեմ երէկ քո կորստաբեր հմայքով բարձրացրեր գահ, որին հետամուտ չէի, որը երբեք մօքիցս անդամ չէր անցնում, և այսօր ինչու, երբ հրապուրիչ յոյսը կուրացրել է հոգիս, երբ սէրը, որ դո՛ւ բիշ յոյսը կուրացրել է հոգիս, երբ սէրը, որ դո՛ւ ասած բերիւր իմ սրտում, որ նոյնիսկ արքայաժայել փառքից էլ թանկ եղաւ ինձ համար, զրկեցա յանկարծ ամէն բանից, ամօթի դրոշմն եմ կրցա յանկարծ ամէն բանից, ամօթի դրոշմն եմ կրցում ճակատիս, և ո՞վ է այս բոլորն անողը: Դո՛ւ, որին ոչ մի չարիք չեմ հասցրեր. դո՛ւ, որին կամեցել եմ բարիք անել՝ առանց վարձատրութեան ասելով: Ախ, ինչո՞ւ շրացրիր Սվետանայալ գեղացիի աչերը: Ինչո՞ւ դրիր անյոյս սէրն հոգուս մէջ: Խեղճ Լիւզմիլա, ի՞նչ ես անելու հիմա քո մենաւոր հիւղակում: Դուք, գեղեցիկ վայրեր, որ ինձ կեանք տւիք և ձեր մէջ անց կացրի իմ մանկութիւնը, գուք այժմ խաւար էք երևում աչքիս: Հոգիս ձգտում է գէպի պարիսպներն աչքիս: Հոգիս ձգտում է գէպի պարիսպներն աչքիս: Նոյն ինչ որ իմն էր և ինչ որ հոյակապ Քիէվի: Այն ինչ որ իմն էր և ինչ որ կորցրի մի րոպէում, երբեք չեմ մոռանալու: Ի՞նչ երկրաւոր բախտ կարող է մոռանալ տալ ինձ այն

քաղցր հայեացքը, որ յառեց իմ վրա Սվետանայալ գեղեցիկը, մի հայեացք որ այնքան խաղաղ, այնքան ուրախ սիրտս վառեց մի ակնթարթուհի: Ախ, իմ քաղցրաբոյր ծաղիկներ, թօշնում էք, ո՞վ ջուր պիտի տա ձեզ, ո՞վ պիտի խնամէ: Սիրո՛ւն թօշնիկներ, էլ չէք գալու իմ հիւղակը. էլ ո՞վ պիտի կեր տա ձեզ, ո՞վ պիտի ձայնակցի ձեր զւարթ դայլայլին: Գնամ նստիմ պիտի մեծ ճանապարհի վրա, հեռաւոր Քիէվին եմ նայելու և հոգեով սրանայու եմ այնտեղ: Ախ, ես քեզ ի՞նչ էի արեր, վհուկ, ինչո՞ւ ես հալածում ինձ:

—Լսի՛ր ինձ, բարեսիրտդ Լիւզմիլա, պատասնեց վհուկը, հեշտութեամբ կարող եմ արդարանալ քո ասած: Ես քեզ սիրեցի առաջին իսկ հայեացքից և ի նշան գոհունակութեան ընծայեցի քեզ այն զիւթիչ գօտին, որ ամէն կնոջ զարգարելու գօտութիւնն ունի: Որ աղջիկը որ աէր լինի այդ գօտուն, կը գերազանցէ իր բոլոր մրցակիցներին, կ'ունենա ամէն հրապոյր, ամէն ձիրք. իսկ առանց նրա՝ եղած հրապոյրն ու ձիրքն էլ կը կորցնեն իրանց յոյժը, կ'սքանչանան այդ հրապոյրի ու ձիրքի վրա, բայց այլևս չեն սիրիլ: Ինչո՞ւ ուրեմն, Լիւզմիլա, յարգը չիմացար իմ տւած դանձի: Ինչո՞ւ համար համեստութեան գօտին փոխեցիր ունայնութեան գօտու հետ: Զրկելով այն հոգեթից, որին պարտ էիր քո յաղթանակը, զրկելով

ւեցար և այն Հրապոյրներէից, որք անբաժան են նրանից. սիրահարդ ինքն իր աչքով չկարողացաւ ճանաչել քեզ քո նոր շորերում:—Ա՛խ, վա՛յ զըժ-բախտիս, բացազանչեց Լիւզմիլան, ես ինքս եմ հղել այս բոյորի պատճառը. ես ինքս եմ զրկել ինձ իմ բախտից: Ո՛չ, էլ չեմ տեսնիլ այն օրերը. թուաւ գնաց Հոգուս ուրախութիւնը, չքացան նախկին խնդութիւններս. էլ սրանից յետո արտասուեց է որ պիտի թափեմ, քանի որ այժմ Սվեա-տոսյաւի հոգին նւիրւած է ուրիշի:—Լիւզմիլան երկու ձեռքով ծածկեց երեսն ու լաց եղաւ դառնազին:—Միտիթարւիր, սի՛րելիս, ասաց վհուկը քնքոյշ ժպիտը շրթներին՝ բռնելով նրա ձեռից, դու զո՛հ գնացիր քո անփորձութեանն ու նենգամիտ ընկերուհիներիդ՝ Միրոսլաւայի ու Պէրէսէտայի՝ նախանձին. բայց քո սիրտն անմեղ է: Վերադարձնում եմ քեզ կորցրած զօտիդ: Ես առանց տեսնելու հետևեցա Պէրէսէտային ու Միրոսլաւային, երբ իրանց աւարով միասին բաժանւեցան քեզից: Ճանապարհին սկսան մի սոսկալի վէճ իրար հետ. մին ասում էր ի՛մն է զօտին, միւսն ասում էր ի՛մը. բայց ոչ մէկին էլ չհասաւ, որովհետեւ ես խեցի երկուսից էլ և հիմա կրկին տալիս եմ նրան, ո՛րը միայն արժանի է դրան իր բարեսրտութեամբ ու համեստութեամբ:—Լիւզմիլան նետուեցաւ որ համբուրէ բարերար վհուկին:

ձեռներն, իսկ սա սրբեց նրա արտասուքն, համբուրեց վարդազոյն այտերը և դիւթական ժայպաւէնը կապեց մէջքին:

Յանկարծ, վհուկի խօսքով, ցածիկի հիւղակի յարկը բացւում է: Լիւզմիլայի բերանը բաց է մնում՝ տեսնելով մի շքեղ գեսպակ, որին լծւած էին երկու եղջերու, երկուսն էլ թեւաւոր, բրդերն արծաթ և եղջիւրներն ոսկի: Տձեւ պառաւի տեղակ հանդէս է գալիս մի մատաղհաս կին, հրապոյրը գէմքին, հագին ականապարար շորեր՝ վարդազոյն ճաճանչներով ընդելուզւած, և մէջքին մի սպիտակ գօտի, որի վրա փայլում էին ոսկի աստղանիշեր: Գորբադան—այս էր վհուկի անունը—Լիւզմիլային առաւ գեսպակի մէջ, ոսկեղջիւր եղջերուները պարզեցին իրանց թեւերը, և մի ակնթարթում գեսպակն արդէն Քիէվի հոյակերտ պարիսպների առաջ էր: Վհուկը Լիւզմիլային տարաւ մի առանձնասենեակ, արգիլեց նրան դուրս գալ այդ սենեակից մինչև երեկո, օրհնեց նրան և թաք կացաւ:

Օրն երեկո եղաւ: Լիւզմիլան, շատ պարզ շորերով, սպիտակ ժայպաւէնը մէջքին, մտաւ Վլադիմիր Մեծ իշխանի պալատն և նստաւ իր նախկին տեղում՝ Պէրէսէտայի ու Միրոսլաւայի ետև: Սրանք չնկատեցին, իրանք իրանց մէջ և՛ ծիծաղում էին նրա յիմար դիւրահաւանութեան վրա:

ե՛ մէկը միւսին պատմում էր իր հպարտ ակնկալութիւնները: Բայց Լիւզմիլան մոռացել էր նրանց. նրա աչքը տեսնում էր միայն Սվետոսլաւին: Սա Վյադիմիր Մեծ իշխանի կողքին՝ փղոսկրեա, ոսկեթեւ գահի վրա նստած՝ ձեռք դրսին՝ մտածում էր լուռ. շրջապատող գեղեցկութիւններէն և ո՛չ մին էր արժանանում նրա նոյնիսկ մի ակնարկին: Նրա հոգին որոնում էր Լիւզմիլային միայն, որ պատկերանում էր նրան որպէս մի քաղցր, զրաւիչ տեսիլ կորցրած երանութեան: Յանկարծ — ո՛հ, ի՛նչ ուրախութիւն — տեսնում է նրան հենց այն տեղում, ուր տեսել էր նրան առաջին անգամ, և հենց նոյն պարզ շրթերով. տեսնում է նրան հայեացքն յառած գէպի իրան մի քնքոյշ, սրտազին սիրով: — Ո՛հ, Լիւզմիլա, բացադանչում է և նետուում, ծունկի է գալիս նրա առաջ: — Ողջո՛յն, ողջո՛յն, աննման Լիւզմիլա, միաձայն բացադանչում են բոլորներն, ապնականներն ու պալատականները: Սվետոսլաւն ուրախութիւնից կորցնում է իրան, առնում, կրքծրէն է սեղմում իր քնքոյշ սիրելուհուն, որ իր հեզիկ նայածքով և բոցափառ պատերով կարծես մի հրեշտակ լինէր գեղեցկութեան ու անմեղութեան. տանում է նրան Վյադիմիր Մեծ իշխանի գահի մօտ և նստեցնում է նրա աջ կողքին փղոսկրեա, ոսկեթեւ գահի վրա: Պէրէսէտայի ու Միրոսլաւայի գոյնը թուա նախանձից ու զայրոյթից: Հըն-

չում են նւագարաններն և կրկին պէտք է յաղթանակէր Լիւզմիլան պարի ու երգեցողութեան արեւստի մէջ: Վրկին նսեմացրեց նա իր մրցակիցներին, որոնք բացի Պէրէսէտայից ու Միրոսլաւայից, միաձայն հռչակեցին Լիւզմիլայի յաղթանակը և մինչև իսկ ուրախ էլ եղան. ահա թէ ի՛նչ ոյժ ունի համեստութեան, գեղեցկութեան, ազնուութեան և անմեղութեան հրապոյրը: Յանկարծ պալատում լսելի եղան սուր ձիւեր: Ի՛նչ կա: Զարհուրելի օձեր, բաց որկորներով, սուր խայթոցներով, հրացացտ աչերով, փարել էին Պէրէսէտային ու Միրոսլաւային ազամանդակուռ դօտների տեղակ: — Լիւզմիլան վազում է օգնութեան, ցանկանում է փրկել նրանց այդ զարհուրելի հրէշների խայթածքից, բայց նրա ձիւերն ի զուր են անցնում: Հանդիսատեսները ահից փէտ են կարում: Յանկարծ յսում է մի մեղմ երգ մոգական յարերի թրթռների միջից. օղի միջում տարածուում է վարդերի ու դաշտային շուշանների ախորժելի բուրմունքը. երեսում է կախարդ Դօբրադան՝ պսակած վարդազոյն կարճ շողերով: Լիւզմիլան ծունկի եկաւ նրա առաջ: — Փօկի՛ր Պէրէսէտային ու Միրոսլաւային, բացադանչեց ձեռները գէպի նա երկարելով: — Լաւ, ազնի՛ւ Լիւզմիլա, պատասխանեց կախարդը, քո սիրուն կը ներեմ նրանց: Այն օձերը, որ փարել են զրանց, թունաւոր

օձերն են Լաւասիքոյթ Լաւն ու Աւսիսնձի: Սպիտակ
ժապաւէնդ դպցրու այդ օձերին և կ'անհետանան:
Լիւզմիլան կատարեց Գորբադայի պատուէրը և օ-
ձերն անհետ եղան: Պէրէսուէտան ու Միրոսյաւան
առաջ եկան փարեցան իրանց բարեսիրտ ընկերու-
հուն. ուխտեցին նրան անկեղծ բարեկամութիւն.
սիրեցին նրան, որին մի բոպէ ատել էին, որին
ցանկանում էին կորստի մատնել:

Վյադիմիր Մեծ իշխանն օրհնեց իր որդուն
և Լիւզմիլային: Ո՛ր Սվեատոսլաւ, ասաց հրաշագէտ
հարսն իր հրաշագէտ փեսին՝ ցոյց տալով կախարդ
Գորբադային, ահա իմ բարերարութիւնս, ահա նա,
որին պարտական եմ իմ սիրտը: Ա՛խ, ի՞նչ էի նա
երեք օր առաջ, մի խեղճ Լիւզմիլա, մի հասարակ
գեղջկուհի, իսկ այժմ...: Ո՛չ, երբեք գեղեցկիւդ
Սվեատոսլաւն աչքին չէր ընկնիլ, եթէ բարերար Գոր-
բադայի իշխանութիւնն ինձ չգեղեցկացնէր այն հրա-
պոյրներով ու ձիւրքերով, որոնցից զրկել էր ինձ
ընտելութիւնը: Այո՛, Սվեատոսլաւ, սոյն զիւլթական
զօտու մէջ են ամփոփւած իմ գեղեցկութիւնն ու
շնորհները:

Սոյն համեստ խոստովանութիւնն աւելի ևս
գեղեցկացրեց ցարմանալի Լիւզմիլային Սվեատո-
սլաւի աչքում:— Սիրելիս, ասաց Գորբադան Լիւզմի-
լային, պահիր այս զօտին իբրև թանգակին նւէրն
իմ բարեկամութեան. չկա ոչ մի բան որ սրանից

աւելի լաւ գեղեցկացնէ կին արարածին՝ աղքատիկ
խղիկում լինի թէ իշխանական ապարանքներում.
ցորչալի կրես այս, քեզ պաշտելու են քո այլը,
քո բարեկամներն ու ստորադրեալներդ, պաշտելու
են մինչև կեանքիդ վերջին վայրկեանը:—

Անհետացաւ Գորբադան: Հարկ է ասել թէ
ի՞նչ եղաւ յետո: Եւ կարելի՞ է միթէ երևակայել,
որ Սվեատոսլաւը Լիւզմիլային տէր դառնալուց
յետո երջանիկ չէր այլ ևս:

Վ Ե Ր Զ





ԹԱՐԳՄԱՆՁԻ ԳՈՐԾԵՐԻՑ

ՕՏԱՐ ՓՈԽՆՋԵՐ, Ա. ՀԻՒՄԻ—ՇԻՒԼԼԵՐԻՑ, Գ. 20 Կ.

ՕՏԱՐ ՓՈԽՆՋԵՐ, Բ. ՀԻՒՄԻ—ՀԱՅԵԼՁԻ Հնգեակները,
հառեակներն ու քաղերից. Գ. 25 Կ.

ՄԱՅՐԱՅԱՆ ՍԷՐ—ԱՆԳԵՐՍԵՆԻՑ, Գ. 6 Կ.

ԵՐԵՋ ԴՕՏՐ—Վ. Ա. ԺՈՒԿՈՎՍԿՈՒՅ,

ԳԻՆՆԻ 10 ԿՈՊԵԿ.

ՕՏԱՐ ՓՈԽՆՋԵՐ, Գ. ՀԻՒՄԻ—ՍԱԴԻԻ ԳԻՒԽՍԱՆԻԿ,
ԲՈՒՍԱՆԻԿ ու քաղերից (Մամուլի տակ):

Դիմել

Mesrop Vardapet, Tauris.

3644

2013

